



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 օգոստոսի 2011թ. թիվ 208-Ա

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ
ՎԱՐԺԱՆՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ Լոռու մարզպետի կողմից 09.02.2011թ. հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ՀՀ արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվա կապակցությամբ 2011թ. սեպտեմբերի 6-ին Լոռու մարզի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում անց են կացվելու օբյեկտային վարժանքներ «Դպրոցի անձնակազմի տարահանման և հրդեհաշիջման կազմակերպումն ու իրականացումը» թեմայով, իսկ «ՀՀ Լոռու մարզի Գուգարքի Հ.Շիրազի անվան N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում ցուցադրական վարժանք:

Վարժանքի կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Վարժանքի ղեկավարներ նշանակել.

1) Լոռու մարզի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների ղեկավարներին:

2) «ՀՀ Լոռու մարզի Գուգարքի Հ.Շիրազի անվան N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում Լոռու մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ա.Չատինյանին:

2. Լոռու մարզի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների ղեկավարներին.

1) մշակել և մինչև ս/թ օգոստոսի 12-ը Լոռու մարզային փրկարարական վարչության պետի հաստատմանը ներկայացնել օբյեկտային վարժանքի նախապատրաստման օրացուցային պլանը և ապահովել պլանով նշված միջոցառումների կատարումը սահմանված ժամկետներում.

2) ճշգրտել կազմակերպության գործողությունների պլան-ժամանակացույցերը.

3) ճշգրտել կազմակերպության տարահանման սխեմաները:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին.

1) Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ վարժանքների մասնակիցներին ցուցաբերել մեթոդական և գործնական օգնություն՝ վարժանքների նախապատրաստման և անցկացման գործում.

2) մինչև ս/թ օգոստոսի 20-ը մասնակիցներին իրազեկել որոշման մասին:

4. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Օբյեկտային վարժանքի նախապատրաստման փուլում վարժանքի թեմայի վերաբերյալ մասնակիցների հետ անցկացնել ուսումնական պարապմունքներ՝ ներգրավելով տվյալ տարածաշրջաններն սպասարկող հրշեջ փրկարարական ջոկատների հրամանատարներին:

5. Վարժանքի ընթացքի հսկողությունը դնել Լոռու մարզային փրկարարական վարչության վրա:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ